

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՓՎ/107-2022**

ՀՀ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՄՈՏ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ԺԱՍՆ 14:00 ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ, Ս-6, ՎԱՆԱՁՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՄԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՍՈՒԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (ԿՄ 38+450 - ԿՄ 90 + 191 ՀԱՏՎԱԾ) ՎԵՐԱԿԱՆԳԼՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՍՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՄԻՍՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան**

<b>Մասնակցում էին՝</b>	
Հ. Մաթևոսյան	ՀՀ փոխվարչապետ, խորհրդի նախագահ
Գ. Սանոսյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Ս. Թովմասյան	Կադաստրի կոմիտեի ղեկավար
Ա. Իսայիրյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Տ. Գաբրիելյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ
Ք. Ղալեչյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
Լ. Հովհաննիսյան	Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ
Ա.Սարգսյան	ՀՀ փոխվարչապետի խորհրդական
Գ. Ավետիսյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն
Ն. Մարտիրոսյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ-ծրագրի ղեկավար (համաձայնությամբ)
Ն. Զուլալյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալ

1. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային Ծրագիր Տրանշ 2-ի շրջանակներում Մ1 Երևան-Գյումրի-Բավրա, Ագարակ համայնքի մոտակայքում կմ 29+600 մինչև կմ 37+545 (մոտ 8 կմ) ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցույթի արդյունքները հաստատելու և պայմանագիր կնքելու վերաբերյալ:

## (Նարեկ Զուլայան)

1. ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանն ընդգծեց կապալառու ընկերության կողմից սեղմ ժամկետներում մոբիլիզացվելու և շինարարական աշխատանքները մեկնարկելու կարևորությունը՝ աշխատանքները պայմանագրով սահմանված ժամկետում ավարտելու համար:
2. ՀՀ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Տիգրան Գաբրիելյանը նշեց, որ ծրագրի շրջանակներում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվությունը արդեն իսկ ստացել է դրական եզրակացություն, ժամանակի ընթացքում կատարվել են համապատասխան գործողություններ և հետևաբար անհրաժեշտություն չի առաջանա նոր գնահատման և փորձաքննության:
3. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գոռ Ավետիսյանը՝
  - 1) ներկայացրեց ծրագրի շրջանակներում հողերի օտարման և տարաբնակեցման գործընթացի առաջընթացը և ընդգծեց, որ որոշ տեղամասերում, որտեղ արդեն իսկ ավարտվել է հողերի օտարման և տարաբնակեցման գործընթացը, աշխատանքները կարող են սկսվել:
  - 2) ներկայացրեց տեղեկություններ նաև Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային Տրանշ-2 ծրագրի շրջանակներում հայտարարված Մ-1, Երևան-Գյումրի-Բավրա (կմ 37+545-ից մինչև կմ 71+435) շուրջ 34կմ ավտոճանապարհի մրցութային գործընթացի մեկնարկի վերաբերյալ:
4. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Ք. Ղալեյանը նշեց, որ 2023 թվականի ՀՀ պետական բյուջեում արդեն իսկ պլանավորված են ծրագրի հետ կապված ծախսերը:

Ամփոփելով ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանը նշեց, որ Հյուսիս-հարավ ներդրումային ծրագիրը երկրում ռազմավարական նշանակություն ունեցող ամենակարևոր ծրագրերից է և դրա հետ կապված բոլոր հարցերը և խնդիրները պետք է արագ լուծում ստանան և պետական բոլոր մարմնների կողմից համարվեն առաջնահերթություն:

***Քննարկման արդյունքում որոշվեց՝***

1. Հաստատել Մ1-Երևան-Գյումրի-Բավրա, Ագարակ համայնքի մոտակայքում կմ 29+600 մինչև կմ 37+545 (մոտ 8 կմ) ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցութային գործընթացի արդյունքները և պայմանագրի նախագիծը:
  2. Հանձնարարել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գոռ Ավետիսյանին՝ կնքել Մ1-Երևան-Գյումրի-Բավրա, Ագարակ համայնքի մոտակայքում կմ 29+600 մինչև կմ 37+545 (մոտ 8 կմ) ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների ձեռքբերման պայմանագիր:
  3. Միջոցներ ձեռնարկել շինարարական աշխատանքները հնարավորինս սեղմ ժամկետներում սկսելու ուղղությամբ:
2. Եվրասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ իրականացվող «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի-Տրանշ 4 ծրագրի» շրջանակներում

**Ագարակից դեպի թունելի ելք մոտ 32 կմ ճանապարհի շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցութային փաթեթը հաստատելու վերաբերյալ:**

(Նարեկ Զուլայան)

1. Հաստատել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի (Տրանշ 4) շրջանակներում Ագարակից դեպի թունելի ելք մոտ 32 կմ ճանապարհի շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցութային փաթեթը:
2. Հանձնարարել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գոռ Ավետիսյանին
  - 1) Բանկի համապատասխան հաստատումը ստանալուց հետո սկսել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի (Տրանշ 4) շրջանակներում Ագարակից դեպի թունելի ելք մոտ 32 կմ ճանապարհի շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցութային գործընթացը և արդյունքները ներկայացնել Խորհրդին:
3. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր – Ծրագիր 4 Քաջարան-Ագարակ հատվածի հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի (ՀՕՏՕ) իրականացման նպատակով անհատ խորհրդատուների ծառայությունների ձեռք բերման վերաբերյալ:

(Նարեկ Զուլայան)

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գոռ Ավետիսյանը նշեց, որ հաշվի առնելով հողերի օտարման և տարաբնակեցման գործընթացի իրականացման հրատապությունը շինարարական աշխատանքների արագ մեկնարկի համար՝ Ծրագիրը պայմանականորեն բաժանվել է 4 մասի, որը հնարավորություն կտա առկա ռեսուրսները մոբիլիզացնել հնարավորինս արագ և արդյունավետ կազմակերպել հողերի օտարման գործընթացը: Արդյունքում շինարարական աշխատանքների իրականացման փուլում հնարավոր կլինի խուսափել հնարավոր ռիսկերից:

***Քննարկման արդյունքում որոշվեց՝***

1. Հավանություն տալ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր – Ծրագիր 4, Քաջարան-Ագարակ 1-ին հատվածի 2 ենթահատվածների համար հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման գործընթացն անհատ խորհրդատուների միջոցով իրականացնելու առաջարկությանը և համապատասխան ծառայությունների մատուցման պայմանագրի կնքմանը:
2. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գոռ Ավետիսյանին՝ անհատ խորհրդատուների հետ կնքել համապատասխան պայմանագիր և սկսել հողերի օտարման գործընթացը:
4. Եվրասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ իրականացվող «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի-Տրանշ 4 ծրագրի» շրջանակներում

Ազարակից դեպի թունելի ելք մոտ 32 կմ ճանապարհի շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման մրցութային գործընթացի վերաբերյալ:

(Նարեկ Զուլայան)

1. Եվրասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ իրականացվող «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի-Տրանշ 4 ծրագրի» շրջանակներում Ազարակից դեպի թունելի ելք մոտ 32 կմ ճանապարհի շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման մրցութային գործընթացի վերաբերյալ զեկույցն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գոռ Ավետիսյանին՝ մրցութային գործընթացի արդյունքները ներկայացնել Խորհրդի հաստատմանը:
5. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային Ծրագրի Տրանշ 3՝ Լանջիկ-Գյումրի (27.4 կմ) ճանապարհահատվածի վերակառուցման նախագծի օտարման գոտում գտնվող Հոռոմ բնակավայրի 08-067-0112-0001 կադաստրային ծածկագրով հողամասի օտարման գործընթացի վերաբերյալ:

(Նարեկ Զուլայան)

Սուրեն Թովմասյանը նշեց, որ ճանապարհի նախագծի և օտարման ենթակա գույքի համադրման արդյունքում վեր են հանվել որոշակի անճշտություններ, որոնք ենթակա են լրացուցիչ ստուգման և հստակեցման: Առաջարկվեց հարցը լրացուցիչ քննարկել Կադաստրի կոմիտեում:

***Քննարկման արդյունքում որոշվեց՝***

Հանձնարարել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գոռ Ավետիսյանին՝ խնդիրը լրացուցիչ քննարկել Կադաստրի կոմիտեի հետ և ներկայացնել հարցի լուծման առաջարկություններ:

6. ԱԶԲ ֆինանսավորմամբ իրականացվող Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագրի շրջանակներում 2018 թ. ապրիլի 3-ին կնքված Խորհրդատվական ծառայությունների մատուցման ADB/M6/CS/QCBS/01 «Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի Սահման Մ6 միջպետական ճանապարհի կմ38+450-կմ90+191 հատվածի վերականգնման և բարելավման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն և նախագծերի վերանայում» պայմանագրի Փոփոխման Կարգադրագիր թիվ 8-ի վերաբերյալ:

(Նարեկ Զուլայան)

1. Հաստատել Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-

Բագրատաշեն) բարելավման ծրագրի շրջանակներում 2018 թ. ապրիլի 3-ին կնքված Խորհրդատվական ծառայությունների մատուցման ADB/M6/CS/QCBS/01 «Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի Սահման Մ6 միջպետական ճանապարհի կմ38+450-կմ90+191 հատվածի վերականգնման և բարելավման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն և նախագծերի վերանայում» պայմանագրի Փոփոխման Կարգադրագիր թիվ 8-ը:

2. Հանձնարարել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գոռ Ավետիսյանին՝ գործող կարգին համապատասխան «Սաֆեթ ՄԱՍ և Հիլ Ինթերնեյշնլ Էն.Վի.» համատեղ ձեռնարկության հետ ստորագրել 2018 թ. ապրիլի 3-ին կնքված Խորհրդատվական ծառայությունների մատուցման ADB/M6/CS/QCBS/01 պայմանագրի Փոփոխման Կարգադրագիր թիվ 8-ը և N8 համաձայնագիրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹՎՈՍՅԱՆ